

## ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍԵՐ

**17.09.2011թ. նիստին**

### **Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Յու. Պողոսյանը, Ա. Աղազարյանը, Վ. Դավթյանը:

### **Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի խորհրդական Զ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ Ա. Անանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ Գ.Նշանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջատար մասնագետ Ռ. Շաբոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Երևան քաղաքի գործակալության պետ Վ. Ավետիսյանը:

### **Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.**

1. «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (ամսական), «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (տարեկան), պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման մեթոդական ցուցումները հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրական պետական խորհրդի 2003 թվականի հոկտեմբերի 3-ի «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (ամսական), «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերի և դրանց լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին թիվ 12-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա. Անանյան/*

**Որոշվեց՝**

Հաստատել «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (ամսական), «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (տարեկան), պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման մեթոդական ցուցումները և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրական պետական խորհրդի 2003 թվականի հոկտեմբերի 3-ի «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (ամսական) և «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (տարեկան), պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին թիվ 12-Ն որոշումը:

*/Նորմատիվ/*

2. Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի անցկացման ժամանակ «Վերահսկիչ փաստաթղթերի (Ձև թիվ 6) տեսակավորման և ստուգման», «Հսկիչ թերթերի (Ձև թիվ 4) տեսակավորման և ստուգման» ցուցումների և «ՀՀ 2011 թվականի մարդահամարի նյութերի (հաշվառման փաստաթղթերի) ընդունման-հանձնման» կարգի, ինչպես նաև « Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի նյութերի ծածկագրման/ստուգման» հրահանգը և «Մուտքագրման փուլի ընթացակարգը» հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Գ.Նշանյան/*

**Որոշվեց՝**

Հաստատել Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի անցկացման ժամանակ «Վերահսկիչ փաստաթղթերի (Ձև թիվ 6) տեսակավորման և ստուգման», «Հսկիչ թերթերի (Ձև թիվ 4) տեսակավորման և ստուգման» ցուցումները, «ՀՀ 2011 թվականի մարդահամարի նյութերի (հաշվառման փաստաթղթերի) ընդունման-հանձնման» կարգը, ինչպես նաև « Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի նյութերի ծածկագրման/ստուգման» հրահանգը և «Մուտքագրման փուլի ընթացակարգը» համաձայն հավելվածների:

*/Անհատական/*

### **3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին**

3.1. Հաղորդում՝ Սերբիայի Զլատիբոր քաղաքում 2011 թվականի հուլիսի 7-ից 8-ը Եվրոպական ազատ առևտրի սոցիալիստիկ Եվրամիության վիճակագրական ծառայության և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Վիճակագրական արտադրանքի ռացիոնալացում» խորագրով հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Վ. Ավետիսյան, Ռ. Շարոյան/*

#### **Որոշվեց՝**

Արտասահմանյան գործուղուման հաշվետվության մասին հաղորդումն ընդունելի գիտություն:

*/Անհատական/*

**26.10.2011թ. նիստին**

#### **Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Յու. Պողոսյանը, Վ. Դավթյանը, Ա. Աղազարյանը:

#### **Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի խորհրդական Զ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Հովհաննիսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի բաժնի պետ Լ. Հարությունյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի բաժնի գլխավոր մասնագետ Գ. Սարգսյանը, ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Գ. Սարգսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Մ. Ծատուրյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը:

**Նիստում լավեցին հետևյալ հարցերը.**

1. «Վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը» և «Վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթի լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Գ. Խաչատրյան/*

**Որոշվեց՝**

Հաստատել «Վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը»՝ համաձայն հավելված 1-ի և «Վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթի լրացման հրահանգը»՝ համաձայն հավելված 2-ի:

*/Նորմատիվ/*

2. «Ըստ նպատակների անհատական սպառման դասակարգման (COICOP) նախագիծը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Գ. Սարգսյան/*

**Որոշվեց՝**

Հաստատել «Ըստ նպատակների անհատական սպառման դասակարգումը», «Ըստ նպատակների անհատական սպառման դասակարգումը յոթանիշ մակարդակով»՝ համաձայն հավելվածների և ուժը կորցրած ճանաչել ՀՀ ՎՊԽ 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Անհատական սպառում ըստ նպատակների» վիճակագրական դասակարգիչը հաստատելու մասին» թիվ 30-Ա որոշում:

*/Անհատական/*

3. «Մասնավոր հատվածի կազմակերպությունների շրջանակում ՀՀ կազմակերպությունների բիզնես ռեգիստրի հետազոտություն իրականացնելու մասին փոխըմբռնման հուշագրին հավանություն տալու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/*

**Որոշվեց՝**

Հաստատել «Մասնավոր հատվածի կազմակերպությունների շրջանակում ՀՀ կազմակերպությունների բիզնես ռեգիստրի հետազոտություն իրականացնելու մասին փոխըմբռնման հուշագիրը»՝ համաձայն հավելվածի:

*/Անհատական/*

4. «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների գործունեության մասին» Ձև թիվ 7(տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանության տալու և Հայաստանի Հանրապետության վիճակագրական պետական խորհրդի 2004 թվականի մայիսի 17-ի թիվ 07 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Շտեմարանում հաշվառված հաշմանդամության մասին» Ձև թիվ 1(կիսամյակային) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանության տալու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի մայիսի 17-ի թիվ 08 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ. Պեպրոսյան/*

### **Որոշվեց՝**

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների գործունեության մասին» Ձև թիվ 7(տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվությանը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Շտեմարանում հաշվառված հաշմանդամության մասին» Ձև թիվ 1 (կիսամյակային) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին, ինչպես նաև ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի մայիսի 17-ի «Ձև թիվ 1 «Բնակչության հաշմանդամության մասին» վարչական վիճակագրական հաշվետվային ձևին հավանության տալու մասին» թիվ 08 արձանագրային որոշումը և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի մայիսի 17-ի «Ձև թիվ 7 «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների գործունեության վերաբերյալ» վարչական վիճակագրական հաշվետվային ձևին հավանության տալու մասին» թիվ 07 արձանագրային որոշումը:

### **5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.**

5.1. Հաղորդում՝ Դանիայի Կոպենհագեն քաղաքում 2011 թվականի օգոստոսի 29-ից սեպտեմբերի 2-ը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո Թվինինգ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի «Տեղեկատվական և հեռահաղորդակցման

տեխնոլոգիաների հանրության վիճակագրություն» (S&S) Բաղադրիչի շրջանակում ուսուցողական հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Գ.Անանյան, Ա. Հարությունյան, Ի. Բարոյան/*

5.2. Հաղորդում՝ Մոլդովայի Քիշինև քաղաքում 2011 թվականի սեպտեմբերի 19-ից 20-ը ԱՊՀ վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 46-րդ նիստին և «Ազգային վիճակագրական համակարգերի ռազմավարական զարգացման և կառավարման հիմնախնդիրները» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Լ. Միրզոյան Ա. Սաֆյան/*

5.3. Հաղորդում՝ Թաիլանդի Բանգկոկ քաղաքում 2011թ. սեպտեմբերի 20-ից 23-ը ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան երկրների տնտեսական և սոցիալական հարցերով հանձնաժողովի (UNESCAP) վիճակագրության բաժնի կողմից կազմակերպված «Մարդահամարի տվյալների օգտագործմամբ ոչ ագրեգացված վիճակագրական տվյալների ստացման մոտեցումները և մեթոդները» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Լ. Հարությունյան. Ռ. Հովհաննիսյան/*

5.4. Հաղորդում՝ Թուրքիայի Ստամբուլ քաղաքում 2011թ. հոկտեմբերի 10-ից 13-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Սպառողական գների ինդեքս» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Գ. Մարտիրոսյան/*

5.5. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2011թ. հոկտեմբերի 18-ից 21-ը ՄԱԿ-ի ԵՏՀ էկոլոգիական քաղաքականության կոմիտեի և Եվրոպայի վիճակագիրների կողմից համատեղ կազմակերպված էկոլոգիական ցուցանիշների ներդրմանն ու օգտագործմանը նվիրված Եվրոմիության, Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Միջին Ասիայի երկրների բնապահպանների և վիճակագիրների միասնական նպատակային խմբի և բնապահպանների աշխատանքնային խմբի խորհրդակցություններին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/*

### **Որոշվեց՝**

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունելի գիտություն:

*/Անհատական/*